# ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N510-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին և «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի փետրվարի 16-ի N144-Ա որոշման հավելված N1-ի 3-րդ կետը` Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել`

- քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների (բացառությամբ կոնստրուկտորական մասի և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) մշակման և փորձաքննության գործունեության լիցենզավորման կարգը` համաձայն N1 հավելվածի.
- քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների (բացառությամբ կոնստրուկտորական մասի և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) մշակման գործունեության լիցենզիայի ձևը` համաձայն N2 հավելվածի.
- քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության գործունեության լիցենզիայի ձևը` համաձայն N3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել`

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N778-Ն ու N779-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N510-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 6-ից: